## ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ի կարիքների համար գրենական պիտույքների և գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05/17» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան «24» մարտի 2017թ.
ժամը՝ 10:00

Մասնակցում էին՝

*հանձնաժողովի նախագահ՝*

**Էդգար Տոնականյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմի Պատասխանատու՝ ԳՊ/ԳԱՊ) ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի անդամներ՝*

**Կարեն Մելքոնյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) ՀՀ Արմավիրի մարզի ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Անահիտ Ավագյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

**Արմեն Ասլանյան՝** (Գնման Պատասխանատու/Բացման Աշխատակազմ՝ ԳՊ/ԲԱ) Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար,

*հանձնաժողովի քարտուղար՝*

**Արուս Խաչատրյան՝** (Գնման պատասխանատու /Մրցույթի համակարգող՝ ԳՊ/Մհմ) ՀՀ դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման վարչության գնումների համակարգման բաժնի ավագ մասնագետ:

*Նիստից բացակայում է՝*

**Աղավնի Բուդուլյան՝** (Գնման Պատասխանատու/Գնահատման Աշխատակազմ՝ ԳՊ/ԳԱ) Երևան քաղաքի Արաբկիր և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարանի աշխատակազմի ղեկավար:

**1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05/17» ծածկագրով ընթացակարգի ներկայացրած հայտերի բացման մասին.**

Հայտերը բացվել են www.armeps.am կայքի՝ էլեկտրոնային ձևով գնումների իրականացումն ապահովող համակարգի /այսուհետ՝ Համակարգ/ միջոցով 2017թ.-ի մարտի 24-ին, ժամը 10:00-ին:

**2. Տեղեկատվություն՝ գնման առարկաների ընդհանուր գների վերաբերյալ.**

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011թ. փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի /այսուհետ՝ Կարգ/ 44-րդ կետի 1-ին ենթակետով՝ հանձնաժողովի նախագահը հրապարակեց գնման առարկաների ընդհանուր գները՝ մեկ թվով արտահայտված.

| Չափաբաժնի համարը | Չափաբաժնի անվանումը | Գնման առարկայի ընդհանուր գինը /ՀՀ դրամ/ |
|---|---|---|
| 1. | Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշար | 13 250 |
| 2. | Ապակարիչ | 12 600 |

| | | |
|---|---|---|
| 3. | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | **248 820** |
| 4. | Թղթապանակ, արագակար, թղթյա | **54 600** |
| 5. | Թղթապանակ, կոշտ կազմով | **384 000** |
| 6. | Թղթապանակ, թելով, թղթյա | **43 000** |
| 7. | Կարիչի մետաղալարե կապեր, փոքր | **91 200** |
| 8. | Կարիչի մետաղալարե կապեր, միջին | **245 100** |
| 9. | Կարիչի մետաղալարե կապեր | **259 200** |
| 10. | Կարիչ, մինչև 20 թերթի համար | **88 000** |
| 11. | Կարիչ, 20-50 թերթի համար | **192 000** |
| 12. | Կարիչ, 50-ից ավելի թերթի համար | **480 000** |
| 13. | Դակիչ, քանոնով | **60 000** |
| 14. | Թուղթ նշումների համար, սոսնձվածքով | **237 450** |
| 15. | Թուղթ նշումների համար, տրցակներով | **210 000** |
| 16. | Թղթապանակ | **67 200** |
| 17. | Թղթապանակ | **101 750** |
| 18. | Պլաստիկ քարտեր | **100 000** |

3. Հայտեր են ներկայացրել հետևյալ մասնակիցները՝

| **Մասնակցի անվանումը** | **Գտնվելու վայրը, հեռախոսահամարը** |
|---|---|
| «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ | ք. Երևան, Վարդանանց 110, հեռ. (010) 558483 |
| «ՄԵԳԱ-ՊԵՑՊԵՐ» ՍՊԸ | ք. Երևան, Թումանյան 8, հեռ. (098) 835475 |

4. Համակարգում 15.03.2017թ.-ի դրությամբ գրանցված մնացած բոլոր հնարավոր մասնակիցները հայտեր չեն ներկայացրել:

5. **Տվյալներ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին.**

«ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի, «ՄԵԳԱ-ՊԵՑՊԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերում առկա են հրավերով պահանջվող փաստաթղթերը:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

6. **Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած հայտի /հայտում առկա փաստաթղթերի/՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու մասին.**

6.1 «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

6.2 «ՄԵԳԱ-ՊԵՑՊԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը /հայտում առկա փաստաթղթերը/ կազմված է /են/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան, բացառությամբ՝ ներկայացված <<Գնի առաջարկ>>-ում (Հավելված 4) 7-րդ չափաբաժնի համար առաջարկված ընդհանուր գինը սյունակում առկա է անհամապատասխանություն տառերով և թվերով գրված գումարների միջև. ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասով՝ հիմք է ընդունվում տառերով գրված գումարը՝ **հարյուր քսանմեկ հազար** ՀՀ դրամ:

Հանձնաժողովը որոշեց «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ-ի և «ՄԵԳԱ-ՊԵՑՊԵՐ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

7. Մասնակիցների առաջարկած գներն են՝

ՀՀ դրամ

| Չ/Հ | Չափաբաժնի անվանումը | «ՍՄԱՐԹԼԱՅՆ» ՍՊԸ | | | «ՄԵԳԱ-ՊԵՅՊԵՐ» ՍՊԸ | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ | Արժեք (ինքնարժեքի և կանխատեսվող շահույթի հանրագումարը) | ԱԱՀ | Առաջարկած գինը /ներառյալ ԱԱՀ/ |
| 1 | Փաստաթղթերի համար նախատեսված, սեղանի վրա դրվող դարակաշար | 10 208,33 | 2 041,67 | **12 250** | | | |
| 2 | Ամրակարիչ | 7 875,00 | 1 575,00 | **9 450** | 12 833,33 | 2 566,67 | **15 400** |
| 3 | Թղթապանակ, պոլիմերային թաղանթ, ֆայլ | 143 071,50 | 28 614,30 | **171 685,8** | 186 615 | 37 323 | **223 938** |
| 4 | Թղթապանակ, արագակար, թղթյա | 23 660,00 | 4 732,00 | **28 392** | | | |
| 5 | Թղթապանակ, կոշտ կազմով | 288 000,00 | 57 600,00 | **345 600** | 346 666,67 | 69 333,33 | **416 000** |
| 6 | Թղթապանակ, թելով, թղթյա | 21 500,00 | 4 300,00 | **25 800** | | | |
| 7 | Կարիչի մետաղալարե կապեր, փոքր | 53 200,00 | 10 640,00 | **63 840** | 101 333,33 | 20 266,67 | **121 600** |
| 8 | Կարիչի մետաղալարե կապեր, միջին | 183 825,00 | 36 765,00 | **220 590** | 245 100 | 49 020 | **294 120** |
| 9 | Կարիչի մետաղալարե կապեր | 176 400,00 | 35 280,00 | **211 680** | | | |
| 10 | Կարիչ, մինչև 20 թերթի համար | 70 400,00 | 14 080,00 | **84 480** | | | |
| 11 | Կարիչ, 20-50 թերթի համար | 220 000,00 | 44 000,00 | **264 000** | | | |
| 12 | Կարիչ, 50-ից ավելի թերթի համար | 312 500,00 | 62 500,00 | **375 000** | | | |
| 13 | Դակիչ, քանոնով | 45 000,00 | 9 000,00 | **54 000** | | | |
| 14 | Թուղթ նշումների համար, սոսնձվածքով | 131 916,67 | 26 383,33 | **158 300** | 211 066,67 | 42 213,33 | **253 280** |
| 15 | Թուղթ նշումների համար, տրցակներով | 256 666,67 | 51 333,33 | **308 000** | 350 000 | 70 000 | **420 000** |
| 16 | Թղթապանակ | 16 000,00 | 3 200,00 | **19 200** | | | |
| 17 | Թղթապանակ | 28 520,83 | 5 704,17 | **34 225** | | | |
| 18 | Պլաստիկ քարտեր | | | | | | |

8. -18-րդ չափաբաժնի մասով ոչ մի հայտ չի ներկայացվել:

-11-րդ, 15-րդ չափաբաժինների մասով մասնակիցների կողմից ներկայացված գնային առաջարկները գերազանցում են այդ գնումը կատարելու համար նախատեսված ֆինանսական միջոցները, ինչով պայմանավորված անհրաժեշտություն է առաջանում առաջարկված գների նվազեցման նպատակով ոչ գնային պայմանները բավարարող գնահատված մասնակիցների հետ վարելու միաժամանակյա բանակցություններ՝ ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշման <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 44-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն:

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

**Հանձնաժողովը որոշեց.**

-«ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 18-րդ չափաբաժնի մասով հայտարարել չկայացած՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն (ոչ մի հայտ չի ներկայացվել):

-հաստատել «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 18-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին հայտարարության տեքստը /կցվում է/:

-նիստը կասեցնել, և բանակցություններ վարելու նպատակով հաջորդ նիստը հրավիրել 2017թ. մարտի 30-ին, ժամը 12:00-ին՝ <<ՀՀ դատական դեպարտամենտ>> ՊԿՀ-ի վարչական շենքում (ք. Երևան, Վ. Սարգսյան 5):

*Ընդունվել է որոշում. կողմ՝ 4, դեմ՝ 0:*

Հանձնաժողովի

Նախագահ՝ **Էդգար Տոնականյան**

Անդամներ՝

**Կարեն Մելքոնյան**

**Անահիտ Ավագյան**

**Արմեն Ասլանյան**

Քարտուղար՝ **Արուս Խաչատրյան**

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ <<ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05/17>> ԾԱԾԿԱԳՐՈՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ 18-ՐԴ ՉԱՓԱԲԱԺՆԻ ՄԱՍՈՎ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2017 թվականի մարտի 24-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է
"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի համաձայն

## ՇՐՋԱՆԱԿԱՅԻՆ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԵՐՈՎ ԳՆՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ՝ ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05/17

Պատվիրատուն՝ «ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ-ն, որը գտնվում է ք.Երևան, Վ. Սարգսյան 5 հասցեում, ստորև ներկայացնում է «ԴԴ-ՇՀԱՊՁԲ-15/3-05/17» ծածկագրով շրջանակային համաձայնագրերով գնում կատարելու ընթացակարգը 18-րդ չափաբաժնի մասով չկայացած հայտարարելու մասին համառոտ տեղեկատվությունը:

| **Չափաբաժին** | **Գնման առարկայի համառոտ նկարագրություն** | **Գնման ընթացակարգի մասնակիցների անվանումները՝այդպիսիք լինելու դեպքում** | **Գնման ընթացակարգը չկայացած է հայտարարվել համաձայն՝"Գնումների մասին" ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի** /ընդգծել համապատասխան տողը/ | **Գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու հիմնավորման վերաբերյալ համառոտ տեղեկատվություն** |
|---|---|---|---|---|
| 18 | Պլաստիկ քարտեր | - | 1-ին կետի<br>2-րդ կետի<br>3-րդ կետի<br>4-րդ կետի | ոչ մի հայտ չի ներկայացվել |

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Ա. Խաչատրյանին:

Հեռախոս՝ 010-511-787:

Էլ. փոստ՝ ddgnumner@mail.ru:

Պատվիրատու՝ **«ՀՀ դատական դեպարտամենտ» ՊԿՀ**